



Կարգապահական գործ թիվ 20059

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի մայիսի 18-ի թիվ 270-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/161-Ա**

**ՓԱՍՏԱՔԱՆ ԿԱՐԻՆԵ ԱԼՔԵՐՏԻ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Մեծլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մանե Կարապետյանի, Մելանյա Առուստամյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի և Արսեն Հարությունյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,
քննության առնելով փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանին (արտոնագիր՝ 944) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Աղասի (Ագասի) Գրիգորյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2019թ. դիմել է Կարինե Սիմիդյանին (**այսուհետ նաև՝ Փաստաբան**) իրեն իրավական օգնություն ցույց տալու համար: Դիմողի պնդմամբ Փաստաբանը հրաժարվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր ստորագրել, նշելով, որ ավելի լավ է դատարանում հանդես գալ որպես վստահված անձ, ավելորդ ու անիմաստ ժամանակի վատնումից խուսափելու համար:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանն իր ծառայությունների չափը գնահատել է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը Դիմողը փոխանցել է դրամական փոխանցումների համակարգի միջոցով:

Ըստ դիմողի՝ 2020թ-ի մայիսի վերջին Փաստաբանն իրեն հայտնել է, որ անհրաժեշտ է ներկայացնել պարտապանին սնանկության պահանջ, որի համար անհրաժեշտ է վճարել 120.000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար: Այդ գումարը նույնպես Դիմողը փոխանցել է միջազգային փոխանցումների համակարգով:

Դիմողը նշել է նաև, որ Փաստաբանը սնանկության դիմում է ներկայացրել և միջնորդել հետաձգել պետական տուրքի վճարումը, ինչի պատճառով դատարանը դիմումը վերադարձրել է: Տեղեկանալով վերը նշվածի մասին՝ Դիմողը Փաստաբանից պահանջել է վճարել պետական տուրքը և հրաժարվել է ծառայությունների հետագա մատուցումից:

Հետագայում Փաստաբանը վճարել է պետական տուրքը:

Դիմողը հայտնում է, որ Փաստաբանի անպատասխանատու վերաբերմունքի արդյունքում կորցրել է ժամանակ, ինչն էլ գուցե պարտապանին հնարավորություն է տվել թաքցնել իր ունեցվածքը:

Վերոգրյալի կապակցությամբ Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 22.09.2020թ. թիվ 346-Ա/ԿԳ-20059 որոշման հիման վրա Փաստաբանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.7.2 ենթակետի 3.5.5 ենթակետի, պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

24.09.2020թ-ին կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Փաստաբանների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացրել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունները.

Փաստաբանը 27.08.2020 թվականին բացատրություն է ներկայացրել, որով հայտնել է հետևյալը.

Դիմողի կողմից Փաստաբանին լիազորագիր է տրամադրվել 07.06.2019թ-ին, իսկ պայմանագիրը պարտավորվել է ստորագրել Հայաստան ժամանելուն պես, քանի որ Դիմողը գտնվում էր ՌԴ-ում: Ըստ Փաստաբանի, ծառայությունների մատուցման գումարի չափը բանավոր պայմանավորվածության համաձայն կազմել է 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որը իր մեջ ներառել է ներկայացուցչությունն առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ԴԱՀԿ ծառայությունում:

Փաստաբանի պնդմամբ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը ուղարկվել է իրեն UNISTREAM համակարգի միջոցով: Դիմողի տրված լիազորագրի հիման

վրա փաստաբանը սկսել է իրականացնել վերջինիս շահերի պաշտպանությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԴ/18820/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում, որի արդյունքում Դիմողի հայցը բավարարվել է:

2020թ-ի մայիս ամսին Դիմողը կրկին զանգահարել է փաստաբանին, խնդրել է զբաղվել սնանկության գործով: Փաստաբանը համաձայնվել է և 25.06.2020թ-ին սնանկության դիմում է ներկայացրել դատարան: Այս դիմումը վերադարձվել է, քանի որ դատարանը մերժել է պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին իր միջնորդությունը, որից հետո 24.07.2020թ. փաստաբանը վճարել է պետական տուրքը և նորից մուտք է արել դիմումը դատարան:

Ըստ Փաստաբանի՝ Դիմողի պնդումները սնանկության գործով պետական տուրքի գումարն իրեն վճարելու մասին անհմին են և դիմումին կից որևէ ապացույց չի ներկայացվել այդ մասին:

Փաստաբանը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 23.11.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություն չեն ներկայացրել:

24.11.2020թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. 07.06.2019թ. Դիմողը Փաստաբանին երեք տարի ժամկետով իր անունից հանդես գալու մասին լիազորագիր է տրամադրել: *Սույն փաստը հաստատվում է 07.06.2019թ. լիազորագրով:*

2. 25.06.2020թ. Փաստաբանը դիմողի անունից ներկայացրել է հարկադրված սնանկության մասին դիմում, որի վերաբերյալ կայացվել է «Պետական տուրքի վճարումը հետաձգելու և դիմումը վերադարձնելու մասին» որոշում: *Սույն փաստը հաստատվում է 25.06.2020թ. դիմումի պատճենով, Փաստաբանի բացատրությամբ և դիմումով:*

3. 02.06.2020թ-ին Դիմողը դրամական փոխանցման միջոցով փաստաբանին է փոխանցել 18.000 (տասնութ հազար) ՌԴ ռուբլի գումար: *Սույն փաստը հաստատվում է դրամական փոխանցման համակարգից կատարված քաղվածքով:*

4. Փաստաբանը 24.07.2020թ-ին վճարել է պետական տուրք 100.000 ՀՀ դրամի չափով: *Սույն փաստը հաստատվում է պետական տուրքի վճարման բանկային անդորրագրի պատճենով:*

6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարինե Սիմիդյանի (արտոնագիր 944, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում 6 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, չհաշված սույն կարգապահական գործը:

Հարուցված վարույթներից մեկը կարճվել է, իսկ հինգով Կարինե Սիմիդյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից երկուսով «նկատողություն» կարգապահական տույժի, մեկով «խիստ նկատողություն» հիմնական կարգապահական տույժի և «8 ժամ լրացուցիչ վերապատրաստում» լրացուցիչ կարգապահական տույժի և ևս երկուսով «խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

Փաստաբանի նկատմամբ կիրառված «խիստ նկատողություն» կարգապահական տույժերից երկուսը և «լրացուցիչ վերապատրաստում» կարգապահական տույժը մարված չեն:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հոգուր Պատասխանողի:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով՝ Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, Դիմողից պետական տուրքի գումար ստանալու և առանց պետական տուրք վճարելու դատարան դիմում մուտք անելու վարքագիծը ստուգելու փաստերի առթիվ:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն կարգապահական վարույթի շրջանակներում անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները՝

1. Արդյոք Դիմողը փաստաբանին սնանկության մասին դիմում ներկայացնելու հանձնարարություն տվել է, թե ոչ և եթե այո, ապա՝ երբ.

2. Փոխանցել է արդյոք Դիմողը փաստաբանին սնանկության դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը և եթե այո, ապա՝ երբ.

3. Փաստաբանի կողմից հանձնարարության բարեխիղճ կատարանն ուղղված անհրաժեշտ և բավարար գործողությունների կատարումը.

4. Եթե փաստաբանի կողմից խախտում է կատարվել, ապա երբ է կատարվել ենթադրյալ խախտումը և երբ է դիմողը հայտնաբերել այն:

Անդրադառնալով վերը նշված փաստերի պարզման անհրաժեշտությանը՝ Խորհուրդն արձանագրում է, որ հաստատված է միայն սնանկության դիմում ներկայացնելու հանձնարարություն Փաստաբանին ներկայացնելու փաստը, որը կողմերն ընդունել են:

Փաստաբանի կողմից հանձնարարությունը բարեխիղճ չկատարելու կամ պետական տուրքի գումարը ստանալու փաստերի վերաբերյալ գործում ապացույցներ առկա չեն:

Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Դիմողը պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն փաստաբանի օգտին:

Ինչ վերաբերում է գործում առկա այն ապացույցին, որ Դիմողը Փաստաբանին միջազգային փոխանցման համակարգով վճարել է 18.000 (տասնութ հազար) ՌԴ ռուբլի, ապա այդ ապացույցով հավաստվում է Փաստաբանին գումար վճարելու հանգամանքը,

սակայն այն ինքնին բավարար չէ որոշելու համար, թե արդյոք այդ գումարը վճարվել է հենց որպես պետական տուրքի համար նախատեսված գումար, թե Փաստաբանի հոնորար:

Ինչ վերաբերում է ենթադրյալ կարգապահական խախտման կատարման ժամանակահատվածին, ապա Փաստաբանը 25.06.2020թ. Դիմողի անունից ներկայացրել է հարկադրված սնանկության մասին դիմում, ուստի և ստանձնել նրա շահերի ներկայացումը: Վերոգրյալը հաշվի առնելով՝ Խորհուրդն արձանագրում է, որ դիմումը ներկայացվել է Օրենքով սահմանված վաղեմության ժամկետների պահպանմամբ:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն ուշադրության արժանի է համարում նաև այն հանգամանքը, որ սույն գործով նշանակված որևէ նիստի Դիմողը չի մասնակցել, թեև եղել է պատշաճ ծանուցված, ինչի արդյունքում Խորհրդի անդամները նաև հնարավորություն չեն ունեցել հարցեր ուղղել վերջինիս իր իսկ նշած փաստերի շուրջ:

Վերոնշյալը հիմք ընդունելով՝ Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 և 39.8 հոդվածների պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիոյանի (արտոնագիր՝ թիվ 944) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Կարինե Սիմիոյանին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Մեժլումյան

**18 մայիսի 2021թ.
թիվ ԿԳ/161-Ա
ք. Երևան**